ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ թիվ 67

.

ք. Մարալիկ 22 մայիսի 2012 թվական

ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ԱԼԲԵՐՏԻ ԲՐՈՒԴՅԱՆԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննարկելով Մարալիկ քաղաքի Գագարին փողոցի N 19 հասցեի բնակիչ Արմեն Ալբերտի Բրուդյանի 11.04.2012 թվականի դիմումը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Արմեն Ալբերտի Բրուդյանի կողմից ք. Մարալիկ Թումանյան թողոց 2-րդ նրբանցք N 87 հասցեի հողամասում 1993 թվականին կառուցվել է բնակելի տուն և պարիսպ, սակայն սեփականության իրավունքը հաստատող փաստաթղթերը չեն պահպանվել, միաժամանակ օրինական հատկացված 0.06 հա հողամասի փոխարեն փաստացի օգտագործվում է 0.05802 հա հողամաս, ուստի ղեկավարվելով □Տեղական ինքնակառավարման մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 37 հոդվածի դրույթներով, □Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված բնակելի տների կարգավիճակի մասին□ Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 2-րդ հոդվածների դրույթներով

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Մարալիկ քաղաքի բնակիչ Արմեն Ալբերտի Բրուդյանի (ծնված 08.11.1972 թվականին) կողմից 1993 թվականին ք. Մարալիկ Թումանյան փողոց 2-րդ նրբանցք N 87 հասցեում կառուցված բնակելի տան և պարսպի, ինչպես նաև օրինական հատկացված 0.06 հա հողամասի փոխարեն փաստացի օգտագործվող 0.05802 հա հողամասի գույքային իրավունքները վերականգնել և ճանաչել նրա սեփականության իրավունքը:
2. Սույն որոշման մեկ օրինակը ներկայացնել Անշարժ գույքի կադաստրի Անիի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու նպատակով:
3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարալիկի քաղաքապետի 2012 թվականի ապրիլի 16-ի թիվ 42 որոշումը:

ՄԱՐԱԼԻԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ